



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ИЗДАНИЕ ИМПЕРИАЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА

ԿԱՊՋ ԳԱՂՏՅԱԲՐԸ

Թամագություն

ԳՐԱԴԱՐԱՆ
ԻНСԻՆՈՒԱՏ
ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ
Ակադեմիա
ԽՍՀՄ

Եղիշե Դ. Տաբրեալչա.

Թարգմ. Գևորգ Բարովեանից

Գրքի հ. 3 իրավ.



Տիգրան Ա.

Խ. թ. թ. թ. թ. թ.

Տարգմանութեալի, պատրաստեալի, պատրաստեալի-Յակոբեան
Սերդիկակայա փող. №1.

1904

85

Ս-43

Տաբրեալչան

37

06 JUN 2009
19 NOV 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

85
4-43

ՄԱՍԻՆԻ ՄԵՐԱԾ

59046-66

85 Մերած մասնակիություն -
4-43 առաջ առաջընթաց

Գնաց գուշտերից

ՀԱ - 6852 26/Հ 28

ԿԱՌՋ ԳԱՂՏԵՒՔԸ


Թատրոնի ժողով

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒ
Տ ՎՈՍՏՈԽԵԴՅԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Ակադեմիա Նախարարություն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թատրոնի գեղարվեստական



ԹԱՅԻ ՖԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Թատրոնի պետական պատրաստություն
Ակադեմիական թատրոն
1904



30 JUL 2013

8209

ԳԱԼՈՎՃԱՐ ԶԱՅՐ

Дозволено цензурою 29 апреля 1904 г. Тифлисъ.



59046-66

Կ Ե Ա Հ Ա Յ Ա Հ Ա Յ Ի Ք Բ Բ

Գրեղեցիկ, ջահիլ մայրը, շիկաներ ու վարդապետն մի կին, հանգարտ կերպով տաեղնադործում էր մի փոքրիկ շապիկ, իսկ Մարիօն նստած էր կարպետի վրայ և թղթեց կարմիր ու կապոյտ զինուորիկներ էր կտրում. ահա այդ ժամանակ, յանկարծակի, միանգամայն տնտպասելի կերպով, դուռը բացւեց և շէմքի վրայ, ժպապով, երկաց հայրը:

— Եկ հետո, Մարիօն, զննիք, իմ թանգապին զաւակ, մալրիկիդ խընդրիք, որ քեզ հազցնէ. ես ուզում եմ քեզ հետ զրուանքի զնալ:

Մայրիկն յօնքերը փոքր ինչ կիտեց և տեղից չէր շարժում. Մարիօն ցատկեց և թուշկոտում էր հօր

առաջը, գրկելով նրա ոտերը և կտուի նման տրոբւելով:

— Հայրիկը, հայրիկս եկաւ, —
կրկնում էր նա և ուրախութիւնից
թոշկոտում:

— Իչ, էլ ինչ ես սպասում, Թեկ-
լա, Մարիօին հազցըու, չէ՞ որ ար-
դին ուշ է:

— Դու ճշմարիտ ուզում ես նրա
հետ զբոսանքի զնալ, — հարցըց նա
դարմացած, առանց տեղից շարժ-
ւելու:

— Մի մտածիր է. ախը ես եր-
կու ազատ ժամ ունիմ. չէ՞ որ սա
ուզզակի հրաշք բան է, իսկ Մարիօն
ինձ հետ երբէք ոչ մի տեղ չի եղել:

— Եթէ նրան Պինչիօ տանես,
նա կըմըսի:

— Եթէ այդպէս է, ես նրան այլ
ես Պինչիօ չեմ տանիլ: Որդեակս, չէ
քեզ համար միենոյն է, Պինչիօ զնան
թէ շըդնաս:

— Այո, հայրիկ, ինձ համար միե-
նոյն է, միայն թէ քեզ հետ զամ և
մայրիկս էլ ինձ մախմուրէ զգեստս
հազցնէ:

— Պալատի մօտերքը խոնաւ կը-
լինի, — նկատեց մայրը:

— Մենք կարող ենք պալատի
մօտերքը շըդնալ: Ա՛, հասկացայ, դու
չես ուզում, որ Մարիօն հետո զայ...
Ուրեմն դու նախանձում ես որ միա-
սին ենք զնալու, հա՞:

— Մաքովս էլ չի անցել, — ասաց
նա, ուսերը վեր բաշելով:

Ու տեղից բարձրանալով, իսկա-
պէս գժւաբութեամբ շարժւելով մի
դարանակից միւսը, բացելով բոլոր
արկղներն ու բոլոր պահարանները
և ոչինչ շըդնելով, ջահիլ, սիրունիկ
մայրն սկսեց հազցնել Մարիօն:

Իսկ Մարիօն, սատանի ճուտի
պէս, շապկանց զլդիզլոր էր գալիս
անկողնում և սպասում էր, մինչև որ
մայրիկը նրա արդուզարդի բոլոր
պահարանները կըդանէր: Նա խա-
ղում էր հօր հետ, վերջինս էլ ան-
դադար համբուրելով՝ նրան բարձ-
րացնում գցում էր անկողնի վրայ
և ինքնն էլ ծիծաղելով ընկնում էր
նրա կշտին:

Հաղցնելու ժամանակ մայրը շատ
անգամ թեքուում էր դէպի Մարիօի
պիպը, իսկապէս ցանկանալով նըան
մի զայտնի բան ասել: Բայց ամու-
սինը բոլոր ժամանակ այնուհեղ էր՝
ծիծաղագէմ և ուրախ:

Վերջապէս մայրը վերաբերեն
արդէն հազցրեց Մարիօին և, չընը-
կառելով, ծուռ կերպով կոճկեց այն:
Պէտք եղաւ կոճակները բացել և
նորից կոճկել նըանց ամբողջ շար-
քը: Մարիօն անհամբերութիւնից
գողում էր: Եըս մայրն սկսեց Մա-
րիօի համար թաշկինակ փնտրել,
հայրն արդէն գլխարկը ծածկած
պատրաստ էր:

— Ոչի՞նչ, Թեկլա, եթէ հարկա-
ւոր լինի՝ իմս կըտամ:

— Ենձ թաշկինակ հարկաւոր չի
դալ, գնանք, գնանք, հայրիկ:

— Նրա համար խաղալիկներ չը-
գնես, խորհուրդ տուց իր ամուս-
նուն՝ կիսաձայն ասելով:

— Անհոգ կաց, չեմ գնիլ:
Մայրը համբուրում է իր զա-

ւակի ճակատը մի երկարատև համ-
բուրով, այնպիսի երկարատև, որ
կարծես դրանով մի բան է ուզում
նրան ասած լինել:

Նա զուրս է զալիս նախասե-
նեակը և նայում է, թէ ինչպէս հայր
և որդի իջնում են սանդուղքից՝ դա-
տարկաբանելով և թռչկոտալով:

— Մարիօ, — կանչում է նա:

— Ի՞նչ է, մայրիկ:

— Լսիր... եկ այստեղ:

— Մայրիկ, այդտեղից ասա:

— Վախում եմ մըսես, եկ վրդ-
նոցդ տամ:

— Ո՛չ, չեմ մըսում: Յ'տեսութիւն,
մայրիկ:

II

Մօտենալով բալագանի զոնե-
քին, ուր ցոյց են տալիս — վանդակ-
նելում վազրեր, և աւազաններում՝
կոկորդիլուսներ, Մարիօն սկսեց վա-
խենալ, և նրա հետաքրքրութիւնը
պակասեց: Նա նայում էր հօրը և
արդէն նրա գեղեցիկ դնչիցն երե-

տում էր, որ երկիւղը հետաքրքրութեան հետ կուր է մղում. կանգ առնելով դռների մօտ, նա չէր վստահանում ներս մտնել:

— Հայրիկ, կոկորդիլոսները շատ են մեծ:

— Այո՛, իմ երկոսոտ:

— Այնպէս մեծ, ինչպէս խոհարարուհի նամնամն:

— Նըանք ուրիշ ձեփ են. տափակ ու երկար:

— Ջարունակենք մեր ճանապարհը, հայրիկ. ամսնից լաւ այն է, որ դու ինձ վազրերի և կոկորդիլոսների մասին պատմես, ես այդ աւելի եմ սիրում. ապա ինձ ճամար խաղալիկներ կը գնիս այն վաղով, որը դու պէտք է վճարէիր բալազանը մտնելիս:

— Ո՛չ, անզինս, դու առանց այն էլ շատ խաղալիկներ ունիս:

— Ա՛յս, հայրիկ, ինչ ես ասում: Եթէ գիտենայիր, թէ Ալքասանդրն ինչքան խաղալիկներ ունի... և այն էլ ինչպիսիները... Օ՛, բոլորն էլ լար-

ւում և ման են զալիս: Նա ունի մի երկաթուղի՝ երեք վագոնից կազմած, միջումն էլ ճանապարհորդներ: Եւ յիտոյ՝ շողեմերենայումն մեքենավարը ամբողջովին սկացած ու գունատ: Նա ձի վարժեցնելու դործիք էլ ունի, և այնտեղ ձիաները բոլոր ժամանակ պտտւում են, շարունակ պտտւում: Հայրիկ, ինձովէս պստիկ եղած ժամանակ զմ. էլ ունեցել ես խաղալիկներ:

— Այո՛, բայց քո ունեցածներից շատ աւելի քիչ:

— Իսկ քեզ, հայրիկ, չե՞ն շըմփացնում:

— Պատահում էր, թանգագինս:

— Խփած տեղդ ցաւում էր:

— Երբեմն:

— Երբ մայրիկն ինձ շըմփացնում է, երբէք ցաւ չէ պատճառում: Ես լալիս եմ ու բգաւում, բայց այդ էլ հէնց այնպէս: Այժմ նա ինձ երբէք չի շըմփացնում:

— Դու շատ ես սիրում մայրիկիդ:

— Այն, հայրիկ, բայց քեզ աւելի եմ սիրում:

— Եթեք շըպէտք է այդպէս ասել: Ինչու ես ինձ աւելի սիրում, քան մօրդ:

— Քեզ, հայրիկ, միայն ճաշի վախտերն եմ տեսնում, իսկ մայրիկին միշտ էլ տեսնում եմ: Եթէ գուինձ համար խաղալիկ կըդնես, այն ժամանակ կասեմ, որ ձեզ երկուսիդ էլ միատեսակ եմ սիրում:

— Ախ, որպիսի գարշելի ստախօնն ես գու: Հապա Զինգերի մօտ գնալ և պաղպաղակ ուտել շնու ուզում արդիօք, դա աւելի լաւ է:

— Այն, այն, հայրիկ, ելակինը, վարդադոյնը:

Հանգարտիկ ուտելով պաղպաղակը, Մարիօն ցանկացաւ մօր համար շաքարահացեր գնել. չէ որ նա, խղճուկ մայրիկը, պաղպաղակ շըստացաւ. սիրուն ժապաւէնով կապած մի փաքրիկ ծրաբ, իր մատն էլ հանգոյցի մէջ անցկացըսծ՝ նա

պէտք է այդ անպատճառ ինքը տանէր:

— Հայրիկ, երբ ես մեծանամ, ամենայն օր կարող եմ պաղպաղակ ուտել:

— Գու կըհիւանդանաս:

— Ո՛չ, ես չեմ հիւանդանալ:

— Հայրիկ, ես ուզում եմ կիրասիր (զրահակիր հեծելազօք) զառնալ:

— Իսկ եթէ գու շըմեծանաս, չէ որ դեռ շատ պստիկ ես:

— Հայրիկ, գու ինձ համար ուտելու բաներ շատ ու շատ բեր, որպէսզի մեծանամ ու հաստանամ: Եթէ այսպէս պստիկ մնամ, ինձ կիրասիր չեն ընդունիլ:

Հենց այդ ժամանակ նըանքանցում էին խաղալիկների մի մեծ խանութի մօտով, և Մարիօն յանկարծ առջեց:

Նա կանգ առաւ պտառհանի մօտ և, բերանը կիսով բացած, աշքերով ազահաբար նայում էր ցուցաղբւած բոլոր հըապուրանքներին:

Մարիօն աշքերն այնպիսի իւան-

դաղատանքով էին նայում խաղալիկ-ներին, որ հայրը չըկարողացաւ ընդ-դիմանալ և Մարիօի հետ մտաւ խա-նութ:

—Ինձ խիստ շատ է դուք գա-լիս քո ինձ համար զնած այս զիւ-զը, — շշնչում էր շարաճճիկը, երբ նրանք ուզուորեցին դէպի տուն. — ինչ ես կարծում, քանի տուն կայ այստեղ:

—Կարծում եմ, որ մի քսան տուն կըլինի:

—Որ այդպէս է, քեզ մի ան-գամ կըհամբուրեմ, իսկ եթէ այս-տեղ կայ նաև եկեղեցի մեծ զանգա-կատնով միասին՝ քեզ մի անգամ և պինդ, շատ պինդ կըհամբուրեմ: Ես շատ ու շատ ուրախ եմ, որ դու ինձ համար այս խաղալիկը զնեցիր, ո-րովհետեւ սրա հետ ես կարող եմ տանը խաղալ: Ուրբաթ օրը մայրի-կըն ինձ համար մի սերսօ և մի մեծ զնդակ գնեց: Բայց ինչ կարող եմ անել սերսօի և զնդակի հետ: Զէ որ ես կարող եմ կահ-կարասիքը չար-

գել և հայելին կոտրել, եթէ սկսեմ նըանցով սենեակներումը խաղալ. ճշմարիտ չէ, հայրիկ:

—Սերսօն ու գնդակը դու կտ-րող ես խաղալ Պինչիում, իմ փոք-րիկ հակառակորդ:

—Ոչ, ես չեմ սիրում Պինչիօն: Ես կըխաղամ Պամֆիլիի զղեակում: Մենք, մայրիկի հետ միասին, ուրբաթ օրն այնտեղ զնացինք. ինձ համար շատ տխուր էր փակ կառքով զնա-լը, բայց մայրիկն ասաց, որ երբ Պամֆիլի հասնենք, դուրս կըգանք ու կըզբօսնենք:

—Իսկ դու միթէ փակ կառք երբէք չես նստել:

—Ոչ, հայրիկ:

—Եւ երբ որ Պամֆիլի հասար, դու սերսօ և զնդակ էիր խաղում:

—Եյ՛, մայրիկի՝ Իիշարի հետ խօսած ժամանակը:

—Իիշարի հետ:

—Այ՛, հայրիկ:

—Ինչ էր շինում այնտեղ Իի-շարը:

— Նա այնտեղ գրօննում էր
հայրիկ: Մկրտչում ևս գնում էի մայ-
րիկի և նրա հետ, իսկ յետոյ, զըն-
դակի հետ խաղալով, նրանցից ա-
ռաջ վագեցի, քանի որ ինձ վրայ ոչ
մի ուշադրութիւն չէին դարձնում:
Այդուեղ յանկարծ գնդակս թռաւ միւս
ճանապարհի վրայ և մինչ վնարելու
ետևիցն էի, էլ մայրիկս չըկար, ևս
նրան կորցրի: Օ՛, սաստիկ վախե-
ցայ: Իսկ ինչ կըսկատահէր ինձ, ե-
թէ միանդամայն մոլորէի ահատ-
ուում: Չէ որ ինձ այնտեղ գալիքը
կուտէին:

— Այս... զուցէ... իսկ... իսկ
մայրիկը:

— Ես նրան յետոյ միայն գտայ
փակ կառքի մօտը, նա ինձ սպա-
սում էր:

— Իսկ զու նրան երկար ժամա-
նակ էիր վինտըում:

— Հինգ ըռպէ, հայրիկ:

— Միայն:

— Գուցէ և հինգ ժամ, ինչ զի-
տեմ: Մայրիկն ինձ հայհոյում էր,


իսկ ես լաց էի լինում: Բոլորը զըն-
դակի մեղն էր, հէնց զբա համար էլ
նրան մի լաւ ծեծեցի: Բիշարը մեզ
հետ միասին կառք նստեց և վարա-
գոյրները ցած թողեց, այնպէս որ
փողոցները չէին երևում: Մենք մայ-
րիկի հետ միասին իշանք Բիպետ-
տի մօտը, բայց զբանից առաջ Բի-
շարը մայրիկի վկիցը համբուրեց:
Նա ինչու այդպէս արաւ, հա, հայրիկ:

— Յետոյ՝ մենք գնացինք, իսկ
նա մնաց կառքի մէջ: Բայց ինչու է
նա մայրիկի վկիցը համբուրում: 2է
որ նա իմ հայրիկը չէ և ոչ էլ փոք-
րիկ Մարիօն, որ համբուրենք մայ-
րիկին: Հայրիկ, ասա նրան, որ այլ
ևս այդպիսի բան չանէ:

— Այդ ես կասեմ նրան, որզեա-
կըս:

III

Մայրը նախասենեակում ըս-
տասում էր իր մանկանը, ականջ
դնելով նրա քայլերի աղմուկին:



—Դու մենակ ես, Մարիօ:

—Եյ՛, մայրիկ, մենակ եմ: Հայրիկը մեզ համար բաներ է գնել. ինձ համար զիւղ, իսկ քեզ համար շաքարահացեր:

Նա կանգնած էր ամբողջովին զուհատ, սոսկումով լի: Երեխան հինց դէմ առ դէմ նայում էր նրան իր փայլուն աչքերով:

—Իսկ ուր զնաց քո հայրիկը,
Մարիօ:

— Դնաց թիշտին տսելու, որ
նա այլևս չըհամբուրէ քնզ, մայրիկ:

— Օ՛, Մարիօ, Մարիօ,—աղա-
ղակեց մալրը, անօգնական, յատա-
կի վրայ փուելով,—դու բացեցիր
իմ գաղտնիքը, և... կործանեցիր
ինձ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0306972

8209

Լոյս են տեսել մեր աշխատասիրած

1. Մելքոնյակ (սպառած) 5 ր.
2. Եղու-փեղիկ (սակառաթիւ) 5 »
3. Փոքրիկ ընթերցան (սակառաթիւ) 5 »
4. Փոքրիկ գրոյցներ (սպառած) 10 »
5. Կմոջ վեճիք (Կ. Մենզեսի) 3 »
6. Կմոջ գաղտնիքի (Մ. Սերով) 3 »

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЕ АСИАТИСКОГО
НАУК
СССР

Գումարով զեղչերին 30° զեղչ. 64-
նոսպարհածանր նրանց վրայ: Դիմել
ТИФЛИСԸ, (Շունկունի նասակը)
Գևորգ Բաբурյանց.

Օւառով լրաց կրանքնեն

7. Մայր (Վ., Հիւզօի) և ուրիշ գրոյցներ 5 կ.
8. Յաղոնական նեֆիարներ (սպառաթիրագ.)

85

Ա - 43